

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՀՀ ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՆՔԻ ՎՐԱ

Լիլիթ Սամվելի Բաբայան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

lilit.babayan93@gmail.com

Հոդվածը նետուրսների ներկա սուղ պայմաններում ՀՀ հետարդյունաբերական մի շարք քաղաքների զգալի տարածքներ, կորցնելով իրենց հիմնական գործառույթը, ժամանակի ընթացքում դուրս են մնացել ակտիվ գործունեությունից և աստիճանաբար վերածվել լքված, անօգտագործելի գոտիների: Նման տարածքների քաղաքային միջավայրի հասակագծային, ծավալատարածական և ուրվագծային առավել արդյունավետ արդիականացման տարբերակ կարող է հանդիսանալ արդյունաբերական կլաստերային մոդելի տեղայնացումը: Մոդելի արդյունավետ կազմակերպումն ունի մրցակցության վրա ազդելու ներուժ՝ տարածական պլանավորման տեսանկյունից ստեղծելով միջհամայնքային նոր կապերի հնարավորություն: Կառաջադրվեն քաղաքային ճարտարապետական կերպարների արդիականացման նոր խնդիրներ՝ բարձրացնելով կլաստերի բաղադրիչ ընկերությունների արտադրողականությունը, նորարարական մոտեցումների ինտեգրումը և խթանելով տնտեսության նոր ոլորտներում բիզնեսի զարգացումը:

Բանալի բառեր. արդյունաբերական կլաստեր, տնտեսական զարգացում, հետարդյունաբերական տարածքներ, արդյունաբերական ավաններ, արդիականացում, տարածքի վերակազմավորում, կայուն զարգացում

Ներածություն

Տնտեսության մեջ «կլաստերի» հայեցակարգը առաջին անգամ ներկայացվել է ամերիկացի տնտեսագետ Մայքլ Պորտերի կողմից 1990 թ., ով փաստում էր, որ «Կլաստերը աշխարհագրական դիրքով փոխկապակցված ընկերությունների և որոշակի տարածքում գործող կազմակերպությունների խումբ է, որոնք բնութագրվում են ընդհանուր գործունեությամբ և լրացնում միմյանց»: Ժամանակակից աշխարհում տարածված է ներկայացված կլաստերային մոտեցման հիման վրա տարածաշրջանային տնտեսության մրցունակության բարձրացման գաղափարը [1]:

Արդյունաբերությունը, որպես տնտեսության կարևորագույն ճյուղ, վճռորոշ ազդեցություն է գործում հասարակության արտադրողական ուժերի զարգացման մակարդակի վրա: Արդյունաբերական հեղափոխությունից հետո եվրոպական և հյուսիսամերիկյան երկրներում արդյունաբերությունը դարձել է արտադրության և աշխատանքի առանցքային ճյուղ՝ հետին պլան մղելով առևտրային և ֆեոդալական նախկին տնտեսությունը: Դա տեղի է ունեցել շնորհիվ այն բանի, որ արդյունաբերական հեղափոխությանը շատ արագ հաջորդել են տեխնոլոգիական բազմաթիվ նվաճումներ, այդ թվում՝ ածխի ու պողպատի արտադրությունը (նկ. 1):



Նկ. 1. Արդյունաբերական հեղափոխությունների յուրաքանչյուր փուլում ենթակառուցվածքների զարգացում

Հայաստանում ևս հետապատերազմյան շրջանում արտադրության զարգացման շնորհիվ ագրարային երկիրը հետզհետե դառնում է արդյունաբերական պետություն: 1960-1980–ական թթ. երկրում կառուցվեցին 390-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություններ: Ոլորտի զարգացումը մեծ խթան հանդիսացավ քաղաքաշինական և ճարտարապետատարածական նոր լուծումների առաջադրմանը: Այդ ժամանակաշրջանում կառուցվեցին մի շարք նոր քաղաքներ, որոնք դարձան արդյունաբերության կենտրոններ: Դրանցից էին Չարենցավանը, Հրազդանը, Աբովյանը, Քաջարանը, Դաստակերտը և այլն: Մի շարք նախկին ագրարային բնակավայրերի հենքի վրա կազմավորվեցին արդյունաբերական քաղաքներ՝ Վանաձոր, Հրազդան, Ախթալա, Թումանյան, Ալավերդի, Կապան և այլն: Այդ գործընթացը խթան հանդիսացավ ենթակառուցվածքների զարգացմանը, բարելավվեց հանրապետության տրանսպորտային համակարգը: Կառուցվեցին նոր ավտոմայրուղիներ, Սևան-Շորժա-Զոդ, Մասիս-Նուռնուս, Իջևան-Հրազդան երկաթուղիները, Երևանի մետրոպոլիտենը, մայրաքաղաքի «Զվարթնոց», «Էրեբունի» և Գյումրիի օդանավակայանները: Արդյունաբերության կենտրոնացումը քաղաքներում նպաստեց քաղաքային բնակչության աճին: Հանրապետության 27 քաղաքներում և 31 քաղաքատիպ ավաններում կենտրոնացված էր բնակչության 2/3-ը [2] :

Այսօր ՀՀ հետարդյունաբերական քաղաքներից շատերը գտնվում են տնտեսության՝ արդյունաբերականից սպասարկման ոլորտի անցումային իրավիճակում, ինչը ենթադրում է քաղաքների զարգացման ռազմավարության վերանայում ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական, քաղաքաշինական և շրջակա միջավայրի տեսանկյուններից: Միտումն առկա է աշխարհի խոշորագույն քաղաքներում, այն է՝ տնտեսության կառուցվածքի վերափոխում, սպասարկման ոլորտում զբաղվածների թվաքանակի զգալի աճ և արդյունաբերական ոլորտում ընդգրկվածների զգալի նվազում, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների լուծարում, արդյունաբերական տարածքների գործառույթների փոփոխություններ: Նման քաղաքներում խնդիրները միանման են, սակայն դրանց լուծումները, կապված տեղական առանձնահատկությունների հետ, միմյանցից զգալիորեն կտարբերվեն:

Նյութեր և մեթոդներ

Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է քննարկվող խնդրի համալիր վերլուծություն, մասնագիտական գրականության և արխիվային նյութերի, փաստաթղթերի, հրատարակված գիտական վերլուծությունների ու վիճակագրական տվյալների, իրականացված նախագծերի, տարածական պլանավորման հայեցակարգերի հավաքագրում և ամփոփում, համեմատական և իրավիճակային վերլուծություններ :

Հետազոտության ընթացքում իրականացվել է տեղական և միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա մշակվել են տարածքների փաստացի իրավիճակի, տնտեսական, քաղաքական և սոցիալական գործոնների ազդեցության գնահատման մոտեցումներ: Ձևավորվել է արդյունքների տեղայնացման մեթոդաբանություն՝ ծավալատարածական նոր մոտեցումների կիրառման և քննարկվող գործոնների համակարգային ազդեցությամբ տարածքների հեռանկարային զարգացման ապահովման համար:

Արդյունքներ և քննարկում

Արդյունաբերական կլաստեր

Որպես երկրի տնտեսության գերակա ճյուղ, արդյունաբերությունը կարիք ունի մշտադիտարկման և տնտեսության զարգացման նոր պահանջներին համընթաց առաջխաղացման: Արդյունաբերության մեջ կլաստերային մոդելները դարձել են տեղական և տարածաշրջանային զարգացման հետազոտությունների և պրակտիկայի ամենահայտնի հասկացություններից մեկը՝ ներառելով կազմակերպությունների մի շարք կամ խումբ, որոնք ընդհանուր մոդելի ներքո միավորում են իրենց նյութական, ֆինանսական և տեղեկատվական հոսքերը: Ձևավորված համակարգում մեկ արտադրության վերջնական կամ թափոն հանդիսացող արտադրանքը ծառայում է մյուս արտադրության համար որպես հումք կամ կիսապատրաստ արտադրանք:

Արդյունաբերական կլաստերների տարածական պլանավորումն իրենից ներկայացնում է նմանատիպ և/կամ հարակից ընկերությունների աշխարհագրական համակենտրոնացում, համախմբում, որոնք մրցակցային դաշտ են մտնում միջուկների (գլխավոր և երկրորդական) համաչափ բաշխվածության, ռեսուրսների առկայության և մասնագիտացված աշխատուժի շնորհիվ:

Արդյունաբերական կլաստերի տեղաբաշխման համար կարևոր են երեք հիմնական հատկանիշներ.

- հարմարավետ աշխարհագրական դիրքի առկայությունը (կլաստերային միջուկի ընտրություն),
- ընդհանուր արտադրանք (ռեսուրսներ, տեխնոլոգիա),
- կլաստերի շրջանակներում ընկերությունների միջև փոխադարձ սերտ կապեր:

Արդյունաբերական քաղաքների արդիականացումը և նոր գործառույթների վերագրումը ակնկալում է նոր ճարտարապետաքաղաքաշինական միջամտություններ: Միննույն տարածքում արտադրական գործառույթների կենտրոնացումը՝ հստակ ընդգծված մասնագիտացված

արդյունաբերական գոտիներն աստիճանաբար անհետանում են, իրենց տեղը զիջելով բազմագործառույթ թաղամասերի և շրջանների ձևավորմանը:

Կլաստերների ձևավորման համար կատարվող վերլուծությունները կարող են առաջ բերել մի շարք հիմնավորումներ՝ տարածքների վերագործարկման, արդիականացման, նորարարությունների և տնտեսական հետազոտությունների տեղայնացման համար: Կլաստերների ձևավորումը թույլ է տալիս երկրներին, առանձին համայնքներին և տեղանքներին ավելի մրցունակ դիրք զբաղեցնել գլոբալ տնտեսական շուկայում [3-5]:


Արդյունաբերական կլաստերի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի տնտեսական-մշակութային դեմքը սկսեց արագորեն փոխվել: Արագընթաց զարգացող արդյունաբերության հետ զուգահեռ Հայաստանում գործարանների շուրջ կառուցվում էին քաղաքներ, ավաններ: Հանրապետության տնտեսության առաջատար ճյուղը դարձել էր արդյունաբերությունը, որի հետ էր կապված բնակչության մեծամասնության գործունեությունը: Արդյունաբերական վայրերում էր կենտրոնացած բնակչության կեսից ավելին՝ բնակչության հիմանական աշխատուժը:

ՀՀ տարածքում արդյունաբերական գոտիները ձևավորվում էին բնականոն երկու ուղղություններով.

1. արդեն իսկ ձևավորված բնակավայրերում կազմավորվել էին *արդյունաբերական հանգույցներ* (Երևան, Գյումրի, Վանաձոր, Ախթալա),
2. հատուկ արդյունաբերության զարգացման խթանման համար արտադրամասերի շուրջ ստեղծվել էին *քաղաքատիպ ավաններ* (Մեծամոր, Չարենցավան):

Ձևավորված արդյունաբերական գոտիներն (քաղաքները) իրենց ուրույն կառուցապատմամբ ստեղծեցին յուրատեսակ, տեխնոլոգիական պրոցեսներով պայմանավորված, բնորոշ ճարտարապետատարածական կերպար, շատ քաղաքների համար դառնալով ճանաչելի տարբերանշան (նկ. 2):




Նկ. 2. Հրագդան քաղաք. արտադրական տարածքի ընդգծված կերպարը քաղաքային ճարտարապետական միջավայրում

ՀՀ արդյունաբերական խոշոր գոտիներ ձևավորվել են երկրի հարավային և հյուսիսային մարզերում՝ Սյունիք և Լոռի: Հայաստանի հանքարդյունաբերության հսկաներից էին Կապանի

(Ղափանի) պղնձահանքային, Ալավերդու լեռնամետալուրգիական, Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատները: Վերջին տարիներին շարք մտավ Զոդի ոսկու կոմբինատը և Արարատի ոսկու կորզման գործարանը:

Վերոնշյալ քաղաքներն ունեցել են պատմականորեն ձևավորված և նախկին գործառույթներին հարմարեցված հստակ կազմակերպված բնակելի միջուկներ, որոնց կից հետագայում՝ բնակավայրերի բնականոն զարգացման արդյունքում, ձևավորվել են արդյունաբերական գոտիները՝ վերափոխելով հատակագծային կառուցվածքը պատմական և արդյունաբերական հատվածների անցումային գոտիների միջոցով: Հետագա զարգացումը դրանք վերածեց խոշոր արդյունաբերական հանգույցների՝ ձևավորված գործառական գոտիներով նոր բնակելի, հասարակական, մշակութային և դրանց միջև գործառնական-հատակագծային կապերի համակարգով և հեռանկարային տարածական զարգացման պոտենցիալ ուղղությունների նախանշմամբ:

Խորհրդային Միության փլուզումը և 90-ական թթ. երկրի ներքին և արտաքին քաղաքական վիճակը հանգեցրեցին տնտեսության բոլոր ոլորտների անկման (հատկապես արդյունաբերության), ինչն իր զգալի ազդեցությունը թողեց արդյունաբերական քաղաքների հետագա զարգացման վրա (նկ. 3): Այդ ժամանակ գործող հսկա արտադրական տարածքներն այսօր վերածվել են լքված, չշահագործվող տարածքների, որոնք փորձում են իրենց գոյությունը պահպանել փոքր արտադրամասերի գործունեության հաշվին: Հաշվի առնելով երկրի արդյունաբերական ձևավորված հանգույցները և առկա պոտենցիալը, արդյունաբերության՝ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ներկա առաջընթացը, դրանց առաջադրած նոր մոտեցումներն ու պահանջները տարածքների կազմակերպման նկատմամբ, ինչպես նաև ներկայում բազմագործառույթ խառը տարածքների խրախուսման միտումները, առաջարկվում է համախմբել դրանք՝ կլաստերային մոդելի տեղայնացման փորձով, ակնկալելով տնտեսության բազմաոլորտ առաջընթաց: Այս ամենն իր հերթին անդրադարձ կունենա համապատասխանաբար ինչպես հատակագծային, այնպես էլ ծավալատարածական լուծումների նոր մոտեցումների առաջադրման վրա [6 -11]:



Նկ. 3. ՀՀ մարզերի տնտեսության կառուցվածքում արդյունաբերական ոլորտի զբաղեցրած մասնաբաժինների համահավաք պատկեր, ըստ որի Երևան քաղաքում այն ամենաբարձրն է, իսկ ամենացածրը՝ Տավուշի մարզում

Կլաստերները կարող են խթանել տարածաշրջանային մրցունակությունը հետևյալ հիմնական տեսանկյուններից.

- գործարար արտադրողականության բարձրացում,
- ապագա արտադրողականության աճի վրա հիմնված նորարարական ներուժի խթանում,
- կլաստերի ընդլայնմանն ու ամրապնդմանն ուղղված նոր ձեռնարկությունների ստեղծում,
- եկամտաբերության տոկոսային աճ,
- կլաստերի մաս կազմող համայնքների (ընկերությունների) աշխատանքի արդյունավետության բարձրացում՝ ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային օգտագործման հաշվին,
- սեփական արդյունքների բարելավմանն ուղղված մրցակցություն:


Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը բազմաճյուղ է, ինչն ըստ էության առավելություն է համարվում: Չնայած Հայաստանում մասնագիտացված կենտրոնացման եզակի օրինակների գործունեությանը, վերոնշյալ առավելությունը զգալիորեն թույլ է արտահայտվում: Կլաստերային մոդելի միջոցով արդյունաբերական հանգույցների տարածական համախմբումը կամբողջացնի տնտեսության ոլորտի պատկերը՝ նպաստելով գոյություն ունեցող համալիրների համատեղ զարգացմանը [12, 13]:

Ճարտարապետության տեսանկյունից նոր խնդիրներ են առաջանում քաղաքների գոյություն ունեցող կերպարների պահպանման և դրանց արդիականացման համար: Բազմաթիվ գործարաններ կան, որոնք դիտարկվում են որպես խորհրդային շրջանի ճարտարապետական և քաղաքաշինական ժառանգություն և դրանք կարելի է տարբեր ձևով վերագործարկել: Նոր գործառույթները, որոնք հնարավոր կլինի առաջադրել կլաստերային ցանցով փոխկապակցվող հետարդյունաբերական տարածքներին, կարիք կունենան սպասարկող ենթակառուցվածքների բարելավման, բացակայության դեպքում՝ ներդրման:

ՀՀ յուրաքանչյուր մարզ մասնագիտացել է արտադրության իր ոլորտում, ուստի հիմք ընդունելով ՀՀ տարածքում առկա արդյունաբերական հանգույցները, հնարավոր են հետևյալ արդյունաբերական կլաստերի ճյուղավորումները.

- գյուղարտադրական,
- ռազմարդյունաբերական,
- թեթև արդյունաբերության,
- վերամշակման գործարանների և այլն:

ՀՀ արդյունաբերական ուղղվածության կենտրոնացման հիմնական գոտիների՝ հյուսիսային՝ Լոռու և հարավային՝ Սյունիքի մարզերի վերլուծությունն ի հայտ է բերել վերոնշյալ պատկերը (նկ. 4):










Նկ. 4. ՀՀ արդյունաբերական ուղղվածության կենտրոնացման հիմնական գոտիների բաշխվածությունը և դրանց փոխադարձ կապերը

ՀՀ հետարդյունաբերական մի շարք քաղաքների արտադրական տարածքների կառուցվածքի դինամիկան ներկայացվում է աղյուսակում.

Աղյուսակ

ՀՀ տարբեր մարզերի քաղաքների արդյունաբերական տարածքների վերլուծություն

Անվանումը, պատկերը	Բնակչություն, մարդ	Համայնքի տարածք, հազ/արդյունաբերական գոտու տարածք, հազ	Արդյունաբերության ուղղվածություն	Գործող/չգործող նախկին գործարարություն/արդյունաբերական գործարարություն	Տեղաբաշխումը քաղաքի հատակագծային կառուցվածքում	Հեռանկարային պտտեցիալ կլաստերային մոդելի կիրառումը
1	2	3	4	5	6	7
 <p>Երևան</p>	1092800	22328/1210	Թեթև և սննդի արդյունաբերական, մեքենաշինական, հաստոցաշինական, քիմիական և այլ ոլորտի գործարաններ	Մասնակի գործող, որոշ արտադրական տարածքներ չեն գործում	Կոմպակտ (արդյունաբերական հանգույցներ)	Աշխատատեղերի ստեղծում, ենթակառուցվածքների (ճանապարհներ, երկաթգիծ) բարելավում, քաղաքային խաթարված կերպարի վերականգնում

1	2	3	4	5	6	7
 Վանաձոր	76220	2510/ 305,99	Սննդի և թեթև արդյունաբերության, քիմիական, մեքենաշինական արտադրություն.	Գործող արտադրություն	Գծային (գետի երկայնքով ձգվածությամբ)	Առկա արտադրական տարածքների վերագործարկում, հնարավոր նոր գործառնությունների տեղակայում
 Հրազդան	39957	2100 / 415	<u>Բազմագործառնություն</u> (Հրազդանի ՊՇԷԿ, Աթարբեկյանի ՀԷԿ, «Հրազդանմեքենա» ՓԲԸ, տնաշինական և ցեմենտի գործարաններ)	Մասնակի գործող	Կոմպակտ (արդյունաբերական հանգույց)	
 Գյումրի	111138	4520/1081	Հանքարդյունաբերություն	Չգործող	Ցրված (բաշխված են քաղաքի տարբեր ուղղություններով)	Արտադրական տարածքների վերագործարկում, նոր գործառնությունների տեղակայում
 Կապան	41512	4864/217	<u>Միագործառնություն</u> (լեռնամետալուրգիական)	Գործող	Կոմպակտ (հանգույց)	Առկա արտադրական տարածքների փոխկապակցում, գործառնությունների վերաբաշխում ներկլաստերային համակարգում
 Քաջարան	6810	1996/779	<u>Միագործառնություն</u> (Պղնձամոլիբդենային կոմբինատ)			
 Արարատ	20385	1466,85/ 401,29	Լեռնահանքային արդյունաբերություն	Գործող	Տարանջատ	

Աղյուսակի արդյունքների ընդհանրացմամբ ձևավորում է հետևյալը պատկերը.

- դիտարկված քաղաքների հատակագծային կառուցվածքում արդյունաբերական գոտիները զբաղեցնում են 6-ից 40% մակերես,
- դրանցից ներկայումս տարածքային միջինացված ցուցանիշով ակտիվ օգտագործվում են 10-ից 30% -ը,
- նախկին գործառնությունները պահպանված են մոտավորապես 40 %-ում [14 -18]:

Հետևաբար, քաղաքների հատակագծային կառուցվածքում առկա են զգալի չօգտագործվող տարածքներ, որոնք կարող են ծառայել որպես նույն գործառնությի՝ նորովի վերագործարկման

գործընթացում որպես արդյունաբերական կլաստերի համար պահուստներ, որոնք տեխնոլոգիական նոր մոտեցումների ընձեռած հնարավորություններով պայմանավորված, պահանջում են համեմատաբար սակավ տարածքային ռեսուրսներ, ուստի զգալի նախկին արդյունաբերական տարածքներ կարող են վերադարձվել քաղաքային տնտեսությանը՝ այլ նպատակներով օգտագործելու համար:

Արդյունաբերական գոտիների կլաստերացումը ենթադրում է հնարավորություն վերաշահագործել նախկինում հիմնված արդյունաբերական ավանները՝ վերագործարկման, նոր գործառույթների բաշխման և բաղադրիչների համակարգային գործարկման տարբերակով, ինչը տարածքների զարգացման գործընթացում կհանգեցնի.

- նոր աշխատատեղերի ստեղծման,
- ներհամայնքային և միջհամայնքային հատակագծային կառուցվածքների վերակազմավորման,
- համայնքների միջև տնտեսական նոր կապերի ստեղծման և համակարգային փոխկապակցված զարգացման,
- ծավալահատակագծային նոր ձևերի ներդրման՝ նոր տեխնոլոգիաների առաջադրած պահանջներին համապատասխան:

Աղյուսակում ներկայացված բնակավայրերից որոշները, կատարված վերլուծության համաձայն, ի սկզբանե ձևավորվել են որպես արդյունաբերական ուղղվածության բնակավայրեր՝ համապատասխան ենթակառուցվածքներով և կանոնավոր հատակագծային կառուցվածքով: Որոշները, նախապես ձևավորված լինելով որպես այլ պրոֆիլի բնակավայրեր՝ առողջարանային, մշակութային և այլն, շատ դեպքերում անգամ ներկայացնելով և ընդգրկելով մեկ կամ մի քանի գյուղական բնակավայրեր՝ համապատասխան հատակագծային կառուցվածքով, արդյունաբերական գործառույթի կիրարկման արդյունքում կրեցին հետևյալ քաղաքաշինական և ծավալատարածական փոփոխությունները:

• **Գծային ենթակառուցվածքների զարգացում.** Ճանապարհների կամ երկաթգծի ցանց՝ արդյունաբերական հանգույցներից հանքանյութի տեղափոխման համար (կանոնավոր, արդյունավետ ուղղություններով):

• **Ճարտարապետատարածական կերպարի փոփոխություն.** պայմանավորված նախկին գործառույթներով՝ գլխավորապես 1-2 հարկանի, տեղական շինանյութի կիրառմամբ ի սկզբանե իրականացված և ցածր խտությամբ կառուցապատված թաղամասերը փոխարինվում են միջին և բարձր հարկայնությամբ, մեծ խտություններ ապահովող և կառուցման արագության ապահովման նկատառումներից ելնելով՝ գործարանային պատրաստի էլեմենտներով իրականացված շենքերով:

• **Սոցիալական և սպասարկման ենթակառուցվածքի զարգացում.** մարդկանց՝ արդյունաբերության ոլորտում զբաղվածության հետ կապված, ձևավորված բնակության վայրերն ինքնաբավ ձևավորելու միտումով բարենպաստ մատչելիության գոտում աշխատող հատվածի սոցիա-

լական, սպասարկաման և ժամանցային կարիքների բավարարման հաստատությունների տեղակայում:


Կատարված վերլուծության արդյունքում երևում է, որ բնակայրերը կրել են ինչպես հատակագծային կառուցվածքային փոփոխություններ, այնպես էլ աճել են ըստ բարձրության՝ փոխելով քաղաքների ձևավորված ուրվապատկերը ինչպես բնակելի բազմաբնակարան կառուցապատման շնորհիվ, այնպես էլ արդյունաբերության տեխնոլոգիական պրոցեսների կազմակերպմամբ պայմանավորված՝ արդյունաբերական առանձին կառույցների ուրույն հատկանշական և ճանաչելի ուրվագծերով:

Կլաստերային մոդելի պարզագույն, արդեն իսկ գործող սաղմնային օրինակը առկա է Արարատ քաղաքում: Չողի հանքավայրի հանքանյութը՝ երկաթգծով տեղափոխելով Արարատ քաղաք, հետագա մշակման է ենթարկվում քաղաքի վարչական տարածքում կառուցված գործարանում: Կից ձևավորվել է աշխատողների համար բնակելի գոտի՝ Չողի բանվորական ավանը, կլաստերի ձևավորմամբ փոփոխության ենթարկվելով քաղաքի ձևավորված հատակագծային կառուցվածքը (նկ. 5):


Մոդելի տեղայնացման հնարավոր տարբերակ է Սյունիքի մարզի հիմնական արդյունաբերական հանգույց հանդիսացող Քաջարան քաղաքը, որը միագործառնական նշանակություն ունի, տնտեսությունը՝ միաբևեռ բնույթ, ինչը բացասաբար է անդրադառնում աշխատաշուկայի որակական և մասնագիտական ցուցանիշների վրա: Արտադրական գործառույթի բաշխումը հարակից բնակավայրերի միջև, որպես կլաստերային երկրորդական միջուկներ կապահովի կապ բնակավայրերի միջև, ինչպես նաև կնպաստի այդ բնակավայրերի աշխուժացմանը, ենթակառուցվածքների բարելավմանը և տա րածքների կայուն զարգացմանը (նկ. 6):

Եզրակացություն

Արդյունաբերական տնտեսության մեջ կլաստերային փոխկապակցված բազմաճյուղ մոդելի տեղայնացումը հնարավոր է դարձնում ավելի խոշոր արդյունքների ակնկալման՝ նպաստելով հարակից սպա-



Նկ. 5. Չող արտադրական հանգույցի տեղադիրքը Արարատ քաղաքի հատակագծային կառուցվածքում և դրանց միջև առկա ներկլաստերային կապերը



Նկ. 6. Քաջարան քաղաքի արտադրական հագույցի վերաբաշխման՝ կլաստերային մոդելի ձևավորման սխեմա

սարկող ոլորտների զարգացմանը: Արդյունաբերական կլաստերի ձևավորումը ենթադրում է մի քանի արտադրությունների համատեղ և համաչափ բաշխված փոխկապակցված գործառույթների իրականացում:

Ներկայումս, գտնվելով համաշխարհային տնտեսական զարգացումների և փոփոխությունների արագ դինամիկայի դարաշրջանում, ՀՀ տնտեսության առջև ի հայտ են գալիս նորանոր մարտահրավերներ և վերջիններիս հաղթահարման բազմապիսի տարբերակներ: Նորարարական զարգացման տեսլականի հեռանկարային լինելու փաստը կարող է լինել մեր պետության տնտեսության կարգավորման և մրցունակության բարձրացման հզոր խթան:

Կլաստերային արտադրության կազմակերպումը վերոնշյալ արդյունաբերական միավորումներում և դրանց համակարգային հաջողությունը հնարավոր կլինի վերագրել արտաքին տնտեսական մասշտաբի հասկացությանը, որտեղ մեծաքանակ փոքր ձեռնարկությունների համակցվածությունը կառաջացնի վերջիններիս գործունեության արդյունավետության բավակա-նին բարձր մակարդակ:

Կլաստերացումն իրատեսական հնարավորություն կընձեռնի նաև մարզերի գործող արտադրությունների արդյունքում տուժած կամ էկոլոգիական բացասական ազդեցության տակ գտնվող գոտիների քաղաքաշինական և բնապահպանական խնդիրների լուծմանը: Մարդածին ազդեցության ենթարկված տարածքները բնակավայրերի տարածքում զբաղեցնում են զգալի մակերեսներ՝ պայմանավորված հանքարդյունաբերության հետ:

Գրականության ցանկ

- [1] **M.E. Porter**, Location, competition and economic development: Local clusters in a global economy. *Economic development quarterly* 14 (1) (2000) 15-34.
- [2] **L. Babayan**, Architectural-planning features of Hrazdan city' s industrial territories adaptation as a core of military industrial cluster, Потенциал интеллектуально одарённой молодежи – развитию науки и образования: Материалы VIII Международного научного форума молодых ученых, инноваторов, студентов и школьников 23–25 апреля, 2019 г., Т. 1, с. 274-278.
- [3] **Е.М. Турганбаев, М.В. Козлова**, Индустриальные кластеры: идентификация и оценка из воздействия на экономику региона, в: Сборник научных статей, под ред. Р.М. Нижегородцева. –УПЦ «Набла» ЮРГТУ (НПИ), Новочеркасск, 2010, 13 с.
- [4] **E.J. Feser, E.M. Bergman**, National Industry Clusters: Frameworks for State and Regional Development Policy, University of North Carolina (prepared for Regional Studies, August 6, 1997).
- [5] **D. Maillat**, From the Industrial District to the Innovative Milieu Contribution to an Analysis of Territorialised Productive Organisations. *Recherches Economiques de Louvain* 64(1) (1998) 111-129.
- [6] Formation and development of industrial clusters in the socio-economic regional system, Available from: <<https://www.revistaespacios.com/a18v39n31/18393125.html>>. (accessed 16.05.2022).

- [7] **Н.И. Бабкина, С.В. Здольникова, А.А. Басова**, Управление инновационным потенциалом промышленного кластера для повышения конкурентоспособности и устойчивого роста экономики региона. Известия Юго-Западного государственного университета 2(19) (2016) 46–55.
- [8] **P.S. Benneworth, and D.R. Charles**, Bridging cluster theory and practice: learning from the cluster policy cycle, in: T.M. Bergman, P. Den Hertog, D. Charles, and S. Remoe (Eds.), Innovative clusters: drivers of national innovation systems, OECD, Paris, 2001.
- [9] **A. Carrie**, Integrated clusters - the future basis of competition. International Journal of Agile Management Systems 1 (1) (1999).
- [10] **M. Porter**, Clusters and the New Economics of Competition, Harvard Business Review, November 1 (1998).
- [11] **E.J. Feser, and E.M. Bergman**, National Industry Clusters: Frameworks for State and Regional Development Policy, University of North Carolina, 1977 (prepared for Regional Studies, August 6, 1997).
- [12] Հայաստանի Հանրապետության կառավարություն 10 ապրիլի 2003 թվականի N 610-Ն որոշում՝ Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը հաստատելու մասին:
- [13] Արդյունաբերության զարգացման քաղաքականություն, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի Նախարարություն, Հասանելի է՝ <<https://www.mineconomy.am/page/97>> (Մուտք 10.08.2022):
- [14] Լոռու մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://lori.mtad.am/about-communities/463/>> (Մուտք 06.04.2022):
- [15] Կոտայքի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ և բնակավայրեր, Համայնքների և բնակավայրերի մասին. Հասանելի է՝ <<http://kotayk.mtad.am/about-communities/1/>> (Մուտք 15.04.2022):
- [16] Շիրակի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://shirak.mtad.am/about-communities/576/>> (Մուտք 17.04.2022):
- [17] Արարատի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://ararat.mtad.am/about-communities/69/>> (Մուտք 22.04.2022):
- [18] Սյունիքի մարզպետարանի կայքէջ, Համայնքներ, Համայնքի մասին. Հասանելի է՝ <<http://syunik.mtad.am/about-communities/>> (Մուտք 26.04.2022):

ПОТЕНЦИАЛ ФОРМИРОВАНИЯ ПРОМЫШЛЕННЫХ КЛАСТЕРОВ НА БАЗЕ ПОСТИНДУСТРИАЛЬНЫХ ОБЩИН РА

Лилит Самвеловна Бабаян

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА
lilit.babayan93@gmail.com*

В существующих условиях нехватки земельных ресурсов значительные территории ряда постиндустриальных городов РА, потеряв свою основную функцию, со временем были исключены из активной деятельности и постепенно превратились в заброшенные, непригодные для использования зоны. Наиболее эффективным вариантом модернизации планировочной, объемно-пространственной,

контурной городской среды таких территорий может стать локализация промышленной кластерной модели. Оптимальная организация модели может влиять на конкуренцию, создавая возможность новых межобщинных связей с точки зрения пространственного планирования. Будут поставлены новые задачи модернизации городских архитектурных образов, повышение производительности кластерных компаний, интеграция инновационных подходов и стимулирование развития бизнеса в новых секторах экономики.

Ключевые слова: промышленные кластеры, экономическое развитие, постиндустриальные районы, промышленные поселки, модернизация, реструктуризация территории, устойчивое развитие

THE POTENTIAL FOR THE FORMATION OF INDUSTRIAL CLUSTERS BASED ON THE POST-INDUSTRIAL COMMUNITIES OF RA

Lilit Babayan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

lilit.babayan93@gmail.com

In the current conditions of shortage of land resources, significant territories of a number of post-industrial cities of the Republic of Armenia, having lost their main function, were eventually excluded from active activity and gradually turned into abandoned, unusable zones. Localization of the industrial cluster model can become the most effective option for modernization of the planning, spatial, contour urban environment of such territories. The optimal (effective) organization of the model can influence competition, creating the possibility of new intercommunal connections from the point of view of spatial planning. New tasks will be set to modernize urban architectural images, increase the productivity of cluster companies, integrate innovative approaches and stimulate business development in new sectors of the economy.

Keywords: *industrial clusters, economic development, post-industrial areas, industrial settlements, modernization, territory restructuring, sustainable development*

Բարայան Լիլիթ Սամվելի, Ճարտ. թեկն. (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետության տեխնիկական պատմության և ժառանգության ամբիոն, ասիստենտ, (+374)91728871, *lilit.babayan93@gmail.com*

Бабаян Лилиит Самвеловна, канд. архит. (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Теории архитектуры, истории и наследия, ассистент, (+374)91728871, *lilit.babayan93@gmail.com*

Babayan Lilit, doctor of Philosophy (Ph.D) in Architecture (RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Theory, history and heritage, Assistant, (+374)91728871, *lilit.babayan93@gmail.com*

Ներկայացվել է՝ 22.12.2022թ.

Գրախոսվել է՝ 27.01.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 20.04.2023թ.